Հաշվետվություն
2023 թվականի ապրիլի 3-ից 5-ը Շվեյցարիայի Համադաշնություն
(Ժնև) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արևիկ Ավոյան,
   Միեր Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,
   Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, ապրիլի 3-ից 5-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Մասնակցություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հողային ռեսուրսների կառավարման աշխատանքային խմբի (ՀԿԱԽ) 13-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Հողերի կառավարման ոլորտում բաց տվյալների ապահովման խնդիրները և առավելությունները,
   - Հողերի կառավարման ոլորտում լիազոր մարմինների դերերը և մարտահրավերները,
   - Ինքնակամ կառույցների ոլորտային կարգավորում՝ ֆինանսատնտեսական, սոցիալական և իրավական ռիսկերը,
   - Անդամ պետությունների փորձը ինքնակամ կառույցների ոլորտում՝ օրենսդրության բարելավումը և հիմնական բարեփոխումները,
   - Հողերի և կառավարման և թվային փոխակերպման անհրաժեշտությունը՝ ռիսկերը և հնարավորությունները ֆինանսատնտեսական և տվյալների հավաքագրման ասպեկտները,
   - Հողերի կառավարման դերակատարները և անվտանգությունը. հողերի կառավարման ոլորտի դերակատարների էկոհամակարգը և վերջիններիս ազդեցությունը արդյունավետ հողերի կառավարման վրա,
   - ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հողային

ռեսուրսների կառավարման աշխատանքային խմբի աշխատանքների ուղղությունների քննարկում և հաստատում,

- ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հողային ռեսուրսների կառավարման աշխատանքային խմբի հաշվետվության հաստատում:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Վերոնշյալ միջոցառմանը Կադաստրի կոմիտեն ներկայացրել են կոմիտեի ղեկավարի տեղակալ Արևիկ Ավոյանը և գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանը: Աշխատանքային խմբի նիստերին մասնակցել են նաև խմբի մյուս անդամ պետությունների համապատասխան մարմինների ներկայացուցիչները: Քննարկվել են հողերի կառավարման ոլորտում առկա խնդիրները, ռեսուրսները և մարտահրավերները: Որպես առանձին ուղղություններ՝ քննարկվել են հողերի բարեփոխումների ոլորտում ֆինանսատնտեսական և սոցիալական հարցերը:
Անդամ պետությունները ներկայացրել են իրենց փորձը հողերի արդյունավետ կառավարման և ինքնակամ կառույցների կարգավորման ոլոտներում: Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Արևիկ Ավոյանը հանդես է եկել զեկույցով՝ անդրադառնալով ՀՀ-ում հողերի կառավարման ոլորտի բարեփոխմանը և նորարարություններին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հողային ռեսուրսների կառավարման աշխատանքային խմբի նիստն ավարտվել է զեկույցի ընդունմամբ և նախագահողի կողմից նիստի աշխատանքների արդյունքների ամփոփմամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

Նիստի ընթացքում կարևորվեց մասնակցող երկրների ներկայացուցիչների միջև հողային ռեսուրսների կառավարման ուղղությամբ իրականացվող համագործակցության շարունակականությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արևիկ Ավոյան
Միեր Խաչատրյան

10.04.2023 թ.